



ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՎՈՐՄԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՈՉ_ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Լոս Անջելես քաղաքի բնակարանավորման իշխանությունը (HACLA) ձգտում է բոլոր անհատներին ընծայել հավասար պատեհություն՝ մասնակցելու իր ծրագրերին և օգտվելու նրանցից, հարգելով նահանգային և դաշնային բնակարանավորման օրենքները: Ֆիզիկապես կամ հոգեպես հաշմանդամ անհատը կարող է խնդրել, որ HACLA-ն փոխի, բացառություն անի կամ հարմարեցնի իր կանոնակարգը, քաղաքականությունը, ծառայությունը կամ բարեփոխումը բնակելի բնակարանի կամ ընդհանուր տարածքի կապակցությամբ, ինչը ծանոթ է նաև որպես **Տրամաբանական հարմարություն**, HACLA-ի ծրագրերին հավասարապես մերձենալու համար:

Խնդրանքը կարող է ներկայացվել որևէ ժամանակ: Ծառայությունների համար խնդրանքը, ինչպես՝ հանդիպման ժամանակ խուլերի համար թարգմանությունը, պետք է կատարել գրավոր և կարիքից առնվազն հինգ (5) աշխատանքային օր առաջ:

Տրամաբանական հարմարությունը կարող է շնորհվել միայն հարմարության համար հաշմանդամության առնչված **վավերացված** կարիքի դեպքում: HACLA-ն կարող է հաշմանդամության և/կամ խնդրված հարմարության վերաբերյալ վավերացում պահանջել երբ հաշմանդամությունը և/կամ խնդրված հարմարությունը բացահայտ կամ այլապես ծանոթ չի HACLA-ին: HACLA-ին չեն հետաքրքրում ախտորոշումն ու այլ բժշկական մանրամասնություններ: Դուք պարտավոր եք հաշմանդամությունը HACLA-ին բացահայտել միայն այն դեպքում, երբ հարմարություն եք խնդրում կամ նվազեցնում կամ իրավասության նախապատվություն եք պահանջում ինչ-որ ծրագրի համար՝ հաշմանդամության հիմքի վրա:

Վավերացումը կարող է ընծայվել մի անհատի կողմից, որը իր դիրքի բերումով ծանոթ է հաշմանդամության և խնդրված կարիքին, ինչպես (առանց սահմանափակումի)՝ արտոնագրված բժիշկը, ֆիզիկական թերապևտը, հոգեբույժը, ընկերային ծառայողը, գործի ծառայողը, կամ խորհրդատուն:

Ա. Ծառայությունների, քաղաքականության կամ ընթացակարգերի բացառության օրինակներ են, առանց սահմանափակումի
<ul style="list-style-type: none"> • Հարցազրույցի ժամադրության վերադասավորումը և/կամ գրասենյակ չայցելելը (օրինակ՝ տնային այցը) • Հանդիպումների կամ հարցազրույցների պահին խուլերի համար թարգմանիչ ընծայելը • Լսելու և խոսելու խանգարում ունեցողների համար տեքստային հեռախոսով (TTY) հեռախոսականչի կամ է-նամակի օգտագործումը • Հաշմանդամին թույլատրելը, որ ծրագրի պայմանները բավարարելու համար ստանա արտաքին օգնություն • Հաճախորդներին հանդիպելը անվաթոռի համար մատչելի վայրերում կամ տեղ տրամադրելը՝ հարմարվելու համար ծառայողական կենդանիներին

Բ. Բնակելի բնակարանների և ընդհանուր վայրերի բարեփոխումների օրինակներ են, առանց սահմանափակումի՝
<ul style="list-style-type: none"> • Կառչաձողեր, բազրիքներ, անվաթոռի հարթակներ կամ լծակավոր ամբարձիչներ՝ շարժվել չկարողացող անձի համար • Բնակարանների բարեփոխումը լսողության և տեսողության խանգարում ունեցողների համար (օրինակ՝ հարմար դռան զանգերի ընծայումը, կայլն)

HACLA-ին պատկանող բնակարաններ HACLA-ին պատկանող բնակարանների բնակիչները կարող են խնդրել բարեփոխումը բնակարանի կամ ընդհանուր վայրի: HACLA-ն վճարում է HACLA-ին պատկանող բնակարանների բարեփոխումների մեծ մասի համար:

Հատված 8-ի ծրագրեր Հաշմանդամ վարձակալը *պարտավոր է բնակարանի տիրոջ արտոնությունն ստանալ* բնակարանը բարեփոխելու համար (նախընտրաբար գրավոր) – *բնակարանատերը կարող է կարիքի վավերացում պահանջել*: Նայած շենքին, վարձակալը կամ տանտերը թերևս պարտավորվի վճարել բնակարանի բարեփոխման համար – լրացուցիչ տեղեկության համար այցելեք www.hacla.org/en/about-public-housing/public-housing-residents/fair-housing/reasonable-accommodation կայքը:

Հարմարությունը կարող էք HACLA-ից խնդրել բանավոր՝ դիմելով ձեր ծառայողին, կամ գրավոր, նախընտրաբար օգտագործելով HACLA-ի «Տրամաբանական հարմարության հարցաթերթիկ» ձևաթուղթը (S504-02): Ձևաթուղթն առկա է մեր գրասենյակներում, HACLA-ի կայքում, կամ զանգահարեք 833-422-5248 համարով և խնդրեք, որ այն ուղարկեն ձեզ: HACLA-ի անձնակազմը կարող է ձևաթղթ(եր)ի լրացման հարցում օգնել ձեզ, խնդրանքի դեպքում:

Խոսելու և լսելու խանգարում ունեցողները կարող են օգտագործել TTY համարը կամ ներքին է-նամակի հասցեն, կամ California Relay-ի միջոցով դիմել մեր գրասենյակ: HACLA-ն խնդրանքներին պատասխանում է խնդրանքն ստանալուց մինչև 30 օր հետո: HACLA-ն խնդրողի հետ կապ կհաստատի լրացուցիչ տեղեկության անհրաժեշտության դեպքում: HACLA-ի Տրամաբանական հարմարության քաղաքականությունն ու առնչակից ձևաթղթերը առկա են նաև HACLA-ի կայքում www.hacla.org/en/about-public-housing/public-housing-residents/fair-housing/reasonable-accommodation:

Եթե հավատում եք, որ Բնակարանավորման իշխանության որևէ ծրագրում հաշմանդամության պատճառով ենթարկվել եք խտրականության, լրացրեք և ներկայացրեք Տրամաբանական հարմարության կամ հաշմանդամության խտրականության բողոքի ձևաթուղթ (S504-08): Տրամաբանական հարմարության մերժումը անպայման խտրականություն չի ներկայացնում:

Մատչելիությունը (Հատված 504) համակարգող
Լոս Անջելես քաղաքի բնակարանավորման իշխանություն – Ծրագրավորման բաժանմունք
2600 Wilshire Boulevard, 3-րդ հարկ, Los Angeles, CA 90057
Է-նամակ՝ coordinator@hacla.org
Հեռախոս 833-422-5248 TTY: 213-252-5313